ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ 1804-1813 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (ԸՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ)

Էդուարդ Հովհաննիսյան

Ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմի կարևոր արդյունքներից մեկը Ղարաբաղի խանության միացումն էր Ռուսաստանին, ինչն ամրագրվեց 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրում: Ակնառու փաստ է նաև, որ Ղարաբաղի հայությունը ծանրակշիռ օգնություն ցույց տվեց ռուսական բանակներին և ակտիվ մասնակցություն ունեցավ պատերազմական գործողություններին: Եվ թեպետ հարցի առնչությամբ մեզանում կան բազում անդրադարձներ[1], սակայն Կովկասի հնագրական կան հանձնաժողովի վավերագրերում առկա են ուշագրավ արխիվային փաստաթղթեր, որոնք լրացնում և նոր երանգ են հաղորդում մինչ օրս պատմագիտությանը հայտնի փաստերին:

Ռուս-պարսկական պատերազմում Ղարաբաղի հայության ցուցաբերած աջակցությունը փաստող տեղեկությունները գլխավորապես ներկայացված են հնագրական հանձնաժողովի վավերագրերի երկրորդ հատորում: Խնդրին վերաբերող առաջին լուրջ ընդգծմանը արդեն հանդիպում ենք ռուսական բանակի հրամանատար Պ. Ցիցիանովի 1805 թվականի մայիսի 22-ի իշխան Չարտորիյսկուն ուղղված զեկուցագրում. «Մենք պատրաստ ենք պաշտպանելու Ղարաբաղի խանությունը, ...որի ժողովուրդը աչքի է ընկնում քաջությամբ և, հատկապես, հեծելազորում...»[2]: Ուշագրավն այստեղ այն է, որ հաջորդ իսկ նախադասության մեջ, որը

---

[1] Ղարաբաղի հայության օգնությունը փաստող առաջին գործերից մեկը ռուս նշանավոր ռազմական պատմաբան Վ. Պոտտոյի գիրքն է՝ **Потто В. А.,** Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества (мелик Вани и Акоп-юзбаши Атабековы, Тифлис, 1902. Տես նաև՝ **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, **Բալայան Վ.,** Արցախի պատմություն, Երևան, 2002 և այլն:

[2] Տես՝ Акты собранные каваказской археографической коммиссею. Այսուհետև՝ АКАК, Тифлис, 1866. т. II, Документ 1437. Отношение кн. Цицианова к кн. Чарторийскому, от 22-го мая 1805 года, N 328, с. 706:

վերաբերում էր Ղարաբաղին հարևան Շաքիի խանությանը, ուր հիմնականում մահմեդական բնակչություն էր ապրում, Ցիցիանովը չի զլանում հաղորդել, որ «Շաքիի Սուլեյման խանը և իր ժողովուրդը աչքի չեն ընկնում ո՛չ հաստատակամությամբ և ո՛չ էլ քաջությամբ... տարածվելով լեզգիական սահմանների մոտ, նրանց հետ հարաբերություններում ձեռք են բերել ուխտադրուժ հարևանի և ծույլ ժողովրդի համբավ...»[1]: Ուստի, կարծում ենք, որ ռուսական զորքերի հրամանատարը առաջին հերթին և գլխավորապես զեկուցագրում նկատի է ունեցել տեղի հայությանը: Ավելին, հնագրական հանձնաժողովի վավերագրերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ ռուսական արքունիքի կողմից Ղարաբաղի հայությանը որպես ընթացող պատերազմում իրենց հիմնական դաշնակից ու աջակից ընտրելու գործում կարևոր հանգամանք է եղել ինչպես Իբրահիմ խանի, այնպես էլ տեղի մահմեդականության ակնհայտ հակառուսական դիրքորոշումը: Այսպես, 1805 թ. հուլիսի 23-ին իշխան Չարտորիյսկուն գրած նամակից դժվար չէ կռահել, որ Ղարաբաղի խանի հանդեպ Պավել Ցիցիանովի համբերության բաժակն արդեն լցվել էր. «Պատիվ ունեմ զեկուցելու, որ ես արդեն զորաջոկատով Ելիզավետպոլից մտել եմ Ղարաբաղի տիրույթներ՝ Բաբա-խանի դեմ գնալու համար... վաղը միանալու եմ Ղարաբաղի 600 հոգանոց հեծելազորի հետ, որը գլխավորում է Իբրահիմ խանի որդին, կգնամ դեպի Արաքս, սակայն մինչ իմ ժամանելը Բաբա-խանն արդեն փախել էր Արաքսից այն կողմ: Պատիվ ունեմ նաև հաղորդելու, որ Ղարաբաղի Իբրահիմ խանը մեծամասամբ շրջապատված է դավաճաններով, որոնք ավելի շատ պարսիկներին են հավատարիմ, քան իրեն. ավելին, կարողացան նրան թեքել դեպի դավաճանություն, ուստի անհրաժեշտ եմ համարում Նորին Մեծություն Կայսեր անունից նամակ ուղակել Իբրահիմ խանին, հասկացնելով նրան, որ այդ տիրույթները պաշտպանված են ռուսական անհաղթ զորքերով...»[2]:

Ուստի ակնհայտ էր, որ նման գործողություններով Ղարաբաղի խանն ուղղակի արագացնում էր իր վախճանը, թեպետ ամեն անգամ ջանում էր «ապացուցել» Ցիցիանովին, թե իբր հավատարիմ է ռուսաց

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, Документ 1462. Отношение кн. Цицианова к кн. Чарторийскому, от 23-июля 1805 года, N 512, с. 715-716:

կայսերը տված երդմանը: Իր հերթին, ռուսական զորքերի հրամանատարը բավականին «բարեխղճորեն» այդ ամենի մասին հաղորդում էր ռուսական արքունիք. «...քանի որ այդ ժամանակ տեղի գետերը մեծամասամբ սակավաջուր են, ուստի պարսկական հեծելազորը մի քանի տեղերից անցավ Արաքսը և շարժվեց մեր կողմը... Ղարաբաղի հեծյալներն էլ Իբրահիմ խանի համոզումներից հետո վերադարձան Շուշի, մտան բերդ, իսկ իր շրջապատը ականջալուր լինելով Բաբա-խանի խոստումներին, քաշվեցին մի կողմ, սակայն բերդում մեր զորքերի առկայությունը նրանց ստիպեց մնալ լռելյայն վիճակում: Այդ ընթացքում պարսկական զորքերը մտան Ղարաբաղի խորքերը և ամայացրին Ղարաբաղի դաշտերը... **իմ թախանձագին խնդրանքները Իբրահիմին՝ պաշտպանելու իր բնակիչներին, ապարդյուն անցան** (ընդգծումը մերն է՝ Է. Հ.), **ո**ւստի ես ստիպված եղա այնտեղ ուղարկել Կարյագինի գունդը, որպեսզի կանգնացնի թշնամուն»- գրում էր Ցիցիանովը 1805 թ. հուլիսի 1-ին կայսերն ուղղված զեկուցագրում[1]: Ասվածին հավելենք, որ զեկույցում մեր կողմից ընդգծած միտքը մեկ անգամ ևս ապացուցում է, որ Ղարաբաղի մահմեդական իշխանությունը մշտապես անպաշտպան է թողել տեղի հայությանը և այդ փաստը պետք է շեշտվի:

Պատերազմական այս բարդ իրավիճակում, ռուսական բանակին մեծ օգնություն է ցույց տալիս Ղարաբաղի մելիք Ռուշանը, ինչն արժանացել էր գլխավոր հրամանատարի ուշադրությանը. 1805 թ. հուլիսի 2-ի նամակում Ցիցիանովը գրում էր. «Հայտնի է ինձ, որ դու (խոսքը մելիք Ռուշանի մասին է՝ Է. Հ.) գեներալ-մայոր իշխան Վյազեմսկուն խոստացել ես տալ քո հեծելազորը: Եվ այսպես, գիտենալով քո ջանասիրությունը, թույլատրում եմ քեզ միանալ Կարյագինի ջոկատի հետ: Այսօր արդեն ինձ տեղեկություններ են հասել, որոնք ինձ ուրախացրել են: ...դու կարողացել ես ճեղքել պարսկական շրջապատումը և հասնել Շահ-Բուլաղ և այնտեղ ևս հաղթանակ ես տարել: ...դու գերազանցել ես իմ սպասելիքները, ուստի հավաստիացնում եմ իմ խոստմամբ, որ կպարգևատրվես Նորին Մեծության Կայսեր այնպիսի շքանշանով, որի մասին երբևիցե չես երազել: Ես հավատացած եմ, որ եթե դու այնպես անես, որ գնդապետը պարենի պակաս չունենա բերդում, ապա 100 Բաբա-խաներ այն

[1] Նույն տեղում:

չեն կարող գրավել»[1]: Ասվածից ակնհայտ է, որ հայազգի զորականը մեծ ծառայություն է մատուցել ռուսական բանակին և գնահատանքն էլ գըրվում է մի մարդու կողմից, որը բավականին զուսպ էր հայերին դրվատելու խնդրում:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը ակնառու կերպով հաստատում են նաև այն իրողությունը, որ ռուսների համար ճակատագրական այդ օրերին, երբ ակնհայտ էր տեղի մահմեդականների դավադիր վարքագիծը, ռուսական իշխանությունները աջակցության ակնկալիքով բացառապես դիմել են Ղարաբաղի հայությանը: Եվ այն, որ Հարավային Կովկասում ծրագրված և իրականացված ռազմական գործողությունների ընթացքում ռուսական բանակի պարենով ապահովման գործը կապվել է հայ ժողովրդի հետ, ևս անվիճելի իրողություն է, իսկ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում տեղ գտած և մայոր Լիսանևիչին ուղղված Ցիցիանովի այս նամակը ասվածի անվերապահ հաստատումն է. «Կարծում եմ, որ կարիք չկա հիշեցնելու, որ երբ Կարյագինի ջոկատը կհասնի Շուշի իր գումարտակով, ապա ջոկատը, որը գտնվում է ձեր ենթակայության տակ, կանցնի նրա հրամանատարության տակ և կկատարեք նրա անմիջական հրամանները: Ինձ մնում է ձեզ ասել, որ ...այժմ մեզ համար գլխավորը պարենի մասին հոգ տանելն է, ուստի հրամայում եմ ձեզ օգտագործել բոլոր ջանքերը, որ հացահատիկը դաշտերից հավաքվի, որպեսզի թշնամին չհասցնի այն ոչնչացնել և օգտագործենք մեր զորքերի կարիքների համար: Ինչ վերաբերում է Շուշիի բերդ Ձեր վերադառնալուն և այն գրավելուն,- գրում էր այնուհետև գլխավոր հրամանատարը,- կարող եմ ասել, որ դա ձեր կողմից լավագույն տարբերակն է, քանի որ ծայրահեղ դեպքում պարսիկները չեն կարող այնտեղ մտնել... ես կասկած անգամ չունեմ, որ այդպես կվարվի նաև Իբրահիմ խանը, քանի որ մինչ օրս նա ... չի կատարել իր նույնիսկ մեկ պարտավորություն: Ավելին՝ հույս չունենալով անգամ, որ նա կհավաքի իր հեծելազորը և պատրաստակամ կլինի մեզ օգնելու համար, ***ուստի կցում եմ իմ կոչը՝ թարգմանության հետ միասին, ուղղված Ղարաբաղի հայությանը, որը հորդորում եմ ձեզ տարածել ամե-***

---

[1] Նույն տեղում, Документ 1727. Письмо кн. Цицианова к мелику Рушану, от 2-го июля 1805 года, N 477, с. 836:

նուր և տեղեկացնել հայերին այդ մասին (ընդգծումը մերն է՝ Է. Հ) »[1]:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագերում Ղարաբաղի հայության կողմից ռուսական զորքերին ցուցաբերած նշանակալի օգնությունը հաստատող փաստաթղթերը բազմաթիվ են, սակայն Ղարաբաղի հայ ժողովրդին ուղղված ռուսական իշխանությունների կոչն առանձնանում է իր բնութագրական երանգներով: Հաշվի առնելով փաստաթղթի պատմագիտական կարևորությունը, տեքստը ներկայացնում ենք անշան համառոտագրությամբ. «Միթե դուք, Ղարաբաղի հայեր, որ մինչ օրս աչքի եք ընկել Ձեր քաջությամբ, փոխվել եք, երբ Ձեր տիրակալ Իբրահիմ խանը հավերժ ընդունեց Համառուսական Կայսրության հպատակություն: Դուք դեռ առավել քաջ պիտի մնացած լինեք, հավատալով մեր կայսրության ուժի զորությանը... Ինձ հայտնի են անցյալում կատարած Ձեր քաջագործությունները, ուստի կոչ եմ անում Ձեզ Նորին Մեծության սրբազան անվամբ, միանալ Նրա պատվելի ու անհաղթ բանակին և Ձեր քաջերից կազմելով մեծ թվով հեծելազոր, առանց որի հետևակը կռվել չի կարող, օգնեք անհաղթ և ուժեղ ռուսական բանակին պարսկական զորքերի դեմ, որն ուզում է ամայացնել Ղարաբաղը և թալանել Ձեր յուրաքանչյուրի ունեցվածքը: Ձեզանից մեր ակնկալվող օգնությունը կլինի այն, որ երբ անհաղթ ռուսական զորքերը ջարդեն թշնամուն, դուք հարվածեք նրանց թիկունքից Ձեր հեծելազորով և ոչնչացնեք փախուստի դիմած զինվորներին: Ուստի դրա համար ես ուղարկում եմ Ձեզ այս կոչը՝ որպեսզի ուժեղացնենք ռուսական քաջարի բանակը՝ Կարյագինի գունդը և կրկին անգամ կոչ եմ անում Ձեզ՝ համագործակցել մեզ հետ ռազմական գործողություններում: Հիշեք Ձեր նախկին քաջությունը, պատրաստ եղեք հաղթանակներին և ռուսական բանակին Ձեր հզոր օգնությամբ ցույց տվեք, որ դուք այժմ էլ քաջ Ղարաբաղի հայերն եք, ինչպես անցյալում էիք՝ պարսկական հեծելազորի ահն ու սարսափը»,- գրել է ռուսական զորքերի հրամանատարը[2]:

Ղարաբաղի հայությունն, իհարկե, այս անգամ ևս սատար կանգնեց ռուսական զորքերին և ընդունելով ռուսական հրամանատարության կոչ – խնդրանքը, ակտիվ մասնակցություն ունեցավ ծավալված ռազմական

---

[1] Նույն տեղում, Документ 1714. Предписание кн. Цицианова майору Лисаневичу, от 19-го июня 1805 года, N 424, с. 833.

[2] Նույն տեղում:

գործողություններին և այդ դժվարին պահին ռուսական բանակին անգնահատելի օգնություն ցույց տվեց: Եվ այն փաստը, որ ռուսական ջոկատը շուտով համալրվեց Ղարաբաղի հայերով, այդ մասին տեղեկանում ենք կառավարչապետ Ցիցիանովի մեկ այլ զեկույցից. «Ես հենց նոր տեղեկություն ստացա մայոր Լիսանևիչից, որ պարսկական հեծելազորը մոտեցել է Ասկերանին՝ թալանի համար, իսկ նրանց հիմնական բանակը տեղավորվել է Շուշիից 9 վերստ հեռավորության վրա՝ Խանաչին գյուղի մոտակայքում: ...Մի դադարեք հետապնդել թշնամուն, **հայ Ռուշանի օրինակով ավելի շատ ղարաբաղցիներից հեծելազոր հավաքեք** (ընդգծումը մերն է՝ Է. Հ.), որը ներկայացել է իշխան Վյազեմսկուն և հաղորդել, որ ինքը պատրաստ է 700 հեծյալներով հարվածել պարսիկներին, հետապնդել նրանց և քշել Արաքսից այն կողմ..»[1]:

Ռուս-պարսկական առաջին պատերազմի այդ թեժ օրերին ռուսական ջոկատը գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ Ասկերանի մոտ ճակատամարտում կարողանում է հաղթել և փախուստի մատնել պարսկական բանակին, որում, անկասկած, մեծ է Ղարաբաղի հայության ներդրումը: Իսկ ահա մայոր Լիսանևիչին ուղղված նամակում Ցիցիանովն այսպես էր բնութագրում Իբրահիմ խանի և Ղարաբաղի թաթար բնակչության պահվածքը. «Ես չեմ զարմանում, որ Ղարաբաղի Իբրահիմ խանը և իր շրջապատը չի համագործակցել մեր հեծելազորի հետ,- գրում է Ցիցիանովը: ...Իմ պարտքը պետք է լինի այդ ամենը հասցնել նրան, երբ նա իր ջոկատով ժամանի Շուշի...»[2]:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը թույլ են տալիս հանգելու մեկ կարևոր եզրակացության ևս. պարսկական արքունիքում ռուսներն ու Ղարաբաղի հայերը դիտարկել են որպես միևնույն թշնամիներ: Ասվածը հաստատող փաստաթղթերը հնագրական հանձնաժողովի նյութերում բավականաչափ են. հենց թեկուզ այս մեկը. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի ֆիրմանն է ուղղված Ղազախի աղալարներին. «18 հուլիսի 1805 թվական: Ղազախի բարձրաստիճան աղալարներին, ավագներին և հասարակ ժողովրդին: Թող հայտնի լինի, որ մենք

---

[1] Նույն տեղում, Документ 1716. Предписание кн. Цицианова полк. Карягину, N 435, с. 833:

[2] Նույն տեղում, Документ 1721. Предписание кн. Цицианова майору Лисаневичу, от 28-го июня 1805 года, N 450, с. 834:

մտել ենք Ղարաբաղ և շրջապատել Շուշիի ամրոցը... երբ իշխան, գնդապետ Կարյագինը զորքերով շարժվեց նրանց օգնության, մեր զորքերը շրջապատեցին նրան և չորս օր շարունակ... հարձակվեցինք և ցրեցինք նրանց: Իշխանը, որ Ելիզավետպոլից շարժվում էր Ղարաբաղ, կրկին դարանակալվեց մեր զորքերի կողմից և այդ նույն տեղում ճակատամարտի բռնվեց մեզ հետ. ռուսներից 80 մարդ սպանվեց, որից հետո իշխանը վախից բարձրացավ Ղարաբաղի լեռները...»[1]: Իսկ հիմա ուշագրավ քաղվածքը նույն ֆիրմանից. «Եվ քանի որ Հայերը հավատարիմ են Ռուսներին և նրանց հետ միասին գտնվում են բերդում, իսկ այնտեղի պարսիկները մնացել էին առանց հարգանքի և հանձնված էին բախտի քմահաճույքին,- ասվում էր այնուհետև ֆիրմանում,- ինձ խնդրել են վերաբնակեցնել իրենց այստեղ... (այսինքն՝ Ղազախում՝ Է. Հ.) ավելի քան 20 Հայեր և Ռուսներ մեր զորքերի կողմից սպանվել են և ավելին, Հայերի շատ ապրանքներ մեր զորքերը վերցրել են որպես ավար, իսկ այնուհետև նրանց քշել են բերդ...»[2]: Ինչպես նկատում ենք, ասվածում, կարծես թե, երկիմաստություն չկա. հայերին սպանել և թալանել են բացառապես ռուսական կողմնորոշման, կամ, ինչպես փաստաթղթում է ասվում՝ հավատարմության համար: Այդ տեսակետից, կարծում ենք միանգամայն իրավացի է Արցախի պատմության մեծ գիտակ Բ. Ուլուբաբյանը, երբ գրում էր, թե՝ «Ռուսների ամեն մի նահանջից հետո պարսից գազազած բանակները գալիս էին վերանվաճելու և պատժելու... Եվ այդ ամենին ի՜նչ մասնակցություն ունեցան տեղական մահմեդական կառավարիչները, որոնք հրաշալի գիտեին, թե ու՜մ պետք է պատժել առաջին հերթին և ինչ պետք է անել, որպեսզի ժողովուրդն այլևս գլուխ չբարձրացնի... Ռուս սպաներն իրենց զեկույցներում հիացմունքով ու երախտագիտությամբ էին խոսում Արցախի մելիքների, նրանց զինվորության, հասարակ շինականի անվեհերության մասին, պատմում էին նրանց անշահախնդիր օգնությունն ամեն ինչով, երբ իրենք՝ այդ օգնողները, կարիքի մեջ էին, տուն ու տեղից կտրված, անապահով»[3]:

---

[1] АКАК, т. II, Документ 1101. Предложение кн. Цицианова с. с. Тарасову, от 9-го февраля 1805 года, N 123. Тифллис, 1868, с. 565.

[2] Նույն տեղում:

[3] Տես՝ **Բ. Ուլուբաբյան,** Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, էջ 168:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերից բերված քաղվածքը մեզ մղում է մեկ այլ կարևոր խորհրդածության և դրա մասին չխոսել ու չարձանագրել, կարծում ենք, սխալված կլինենք: Հնագրական հանձնաժողովի հրատարակած արխիվային վավերագրերում մենք այդպես էլ չգտանք մեկ հաստատում, որ ռուսական իշխանությունները իրենց համար դժվարին ու ճակատագրական պահերին դիմած լինեին թաթար բնակչությանը: Դրան հակառակ, հնագրական հանձնաժողովի վավերագրերում, բազմիցս կարելի է հանդիպել Ղարաբաղի մահմեդականության կողմից Ռուսաստանի թշնամիներին հավատարմություն ցույց տալու փաստերի: Զեկույցն էլ, որից պատրաստվում ենք քաղվածք կատարել, սովորականներից չես համարի. ուղղված է անձամբ ռուսաց թագավորին. «Ելիզավետպոլի թաթարները, որոնք ապրում էին բերդում, ոչ միայն մեզ չպաշտպանեցին, այլև նրանց շատ երևելիներ գնացին Աբաս-Միրզայի ճամբար և հունիսի 17-ին միացան պարսկական զորքերին, գիշերով գրավեցին բոլոր այգիները և քարվանսարան, չընդհատվող կրակ բացեցին բերդի վրա»,- գրում էր Ցիցիանովը[1]: Ինչևէ, ներկայացված քաղվածքը թաթարների կողմից ռուսական իշխանության հանդեպ ցուցաբերած մշտական վերաբերմունքի մեկ օրինակն էր միայն:

Իսկ այժմ կարդում ենք նույն զեկուցագրում Ղարաբաղի հայերին վերաբերող հատվածը. «Ղալիսքենդի մեծ գյուղի բնակիչները, որն ընդամենը գետով կես վերստ հեռավորության վրա էր բերդից, **բոլոր Հայերը, տեղեկանալով թաթարների դավաճանության մասին, այդ նույն գիշերը թողեցին գյուղը և եկան բերդ՝ մեզ օգնելու** (ընդգծումը մերն է՝ Է. Հ.): Հաջորդ օրը պարսիկները և թաթարները զրկելով բերդը ջրի պաշարներից, շարունակում էին կրակել բերդի ուղղությամբ...»[2]: Այս է եղել իրականությունը և այսպես է եղել միշտ՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ողջ ժամանակաընթացքում: Հավելենք նաև, որ բերդի պաշարման ընթացքում, երբ մայոր Քոչնևը դուրս է գալիս բերդից՝ պարսիկներին հեռացնելու համար, նրա զինվորների հետ էին 300 հայեր, որոնք գործում էին եգերական 17-րդ գնդի մայոր Բելավինի հրամանատարությամբ: Նրանք նետվեցին դեպի մզկիթի հրապարակը և

---

[1] АКАК, т. II, Документ 1731. Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 23-го июля 1805 года, N 27, с. 837.

[2] Նույն տեղում:

այնպիսի ջարդ տվեցին թշնամուն և եթե չլիներ Գյանջայի թաթարների օգնությունը, որոնք սկսեցին վնասել մեզ, բոլորին կվերացնեին: Սակայն որքան էլ նրանք դիմադրեցին, այդուհանդերձ, չկարողացան դիմանալ մեր ճնշմանը և սրանք ևս հեռացվեցին հրապարակներից ու քարվանսարայից: Այդ ընթացքում թաթարական թվով 25 ընտանիքներ փորձեցին աննկատ մտնել բերդ, սակայն նրանք բոլորն էլ գերի վերցվեցին...», - ասվում էր ռուսական տիրակալին ուղղված գեներալ Պ. Ցիցիանովի 1805 թ. հուլիսի 23-ի զեկուցագրում[1]:

Որքանով նկատում ենք, օգնության ակնկալիքների հարցում ռուսները բացառապես ապավինել են Ղարաբաղի հայ բնակչությանը: Եվ այն, որ ռուսական ջոկատի տեղակայան էր նախատեսված հայկական Ասկերանը, կարծում ենք, որ հարցն այդ առումով առանձին մեկնաբանության կարիք չունի: Ռուսական հրամանատարությունը հիմնավորապես համոզված էր տեղի հայության իրենց հանդեպ ունեցած վերաբերմունքի մեջ և կասկած անգամ չեն ունեցել թշնամական գործողությունների հարցում, ինչն արդեն ճակատագրական կլիներ ռուսական ջոկատի համար: Նույն պատկերն է նաև Շահ Բուլաղի նշանավոր ճակատամարտում, որին, ի դեպ, իր գրքում մանրամասն անդրադարձել է ռուս նշանավոր ռազմական պատմաբան Վ. Պոտտոն[2]:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի երկրորդ հատորում զետեղված է նաև ռուս մի սպայի օրագրից գրառված հատվածներ, որոնցից մեկում կարդում ենք. «Հունիսի 16-ին, երեկոն ընկնելուն պես ես անվտանգ ճանապարհով հիվանդներին և վիրավորներին ուղարկեցի Ելիզավետպոլ: Ես այդ գործի համար առանձնացրեցի 70 եգեր Կարյագինի ջոկատից և **60 ղարաբաղցի հայերի, որպեսզի մեզ ցույց տան ապահով ճանապարհը** (ընդգծումը մերն է՝ Է. Հ.)»[3]: Իսկ այս քաղվածքը Ցիցիանովի վերջին նամակներից է, որն ուղղված էր 9-րդ եգերական գնդի մայոր Ուրակովին և թվագրված է 10-ը հունվարի 1806 թվական. «Այժմ բանակով շարժվում եմ Բաքու... ես քեզ մոտ եմ թողնում մե-

---

[1] Նույն տեղում, էջ 838:

[2] Տես՝ **Потто В. А.,** Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества (мелик Вани и Акоп-юзбаши Атабековы), Тифлис, 1902.

[3] АКАК, т. II, Документ 1732. Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 23-го июля 1805 года, N 28, с. 839.

լիք Ջումշուդին, որպեսզի նա Շիրվանի Մուստաֆա խանից այստեղ բերի **Ղարաբաղի բոլոր տեղաբնիկ ընտանիքներին** (ընդգծումը մերն է՝ Է. Հ.) համաձայն մեր պայմանագրի 6-րդ կետի: …միաժամանակ, նրան կարգում եմ որպես ձեզ օգնական»[1]:

Այսպիսին էր ռուս-պարսկական առաջին պատերազմում ռուսական բանակներին Ղարաբաղի հայության ցուցաբերած ծանրակշիռ օգնության լուսաբանությունը Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում: Անկասկած, պատերազմական գործողություններին Ղարաբաղի հայության մասնակցությունը վճռական նշանակություն ունեցավ ռուսական բանակի հաղթանակների գործում: Կասկածից վեր է նաև, որ այդ օգնությունն առաջին հերթին պայմանավորված էր սեփական հայրենիքը մահմեդական իշխանությունից ազատագրելու Ղարաբաղի հայության դարավոր ցանկությամբ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ 1804-1813 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (ԸՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ)

Էդուարդ Հովհաննիսյան

Բանալի բառեր: *Պատերազմ, Ղարաբաղի (Արցախի) հայություն, Կովկասի հնագրական հանձնաժողով, արխիվային վավերագրեր, օգնություն, կամավորական ջոկատներ, զեկուցագրեր:*

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի կարևոր արդյունքներից մեկը Ղարաբաղի խանության միացումն էր ռուսական կայսրությանը: Ակնհայտ փաստ է նաև Ղարաբաղի հայության ծանրակշիռ օգնությունը ռուսական բանակներին: Նրանք մասնակցություն ունեցան Ղարաբաղում մղված բոլոր նշանավոր ճակատամարտերին և իրենց կարևոր ներդրումը ունեցան ռուսական բանակների հաղթանակների մեջ: Թեպետ Ղարաբաղի հայության ցուցաբերած օգնության հարցը բազմիցս քննության է առնվել հայ և ռուս պատմաբանների աշխատություններում, սակայն «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում» առկա են ուշագրավ արխիվային փաստաթղթեր, որոնք լրացնում և նոր երանգ են հաղորդում մինչ օրս պատմագիտությանը հայտնի փաստերին:

---

[1] Նույն տեղում, Документ 1494. Письмо кн. Цицианова 9-го егерского полка майору кн. Уракову, от 10-го января 1806 года, N 17, с. 728:

КАРАБАХСКИЕ АРМЯНЕ В РУССКО-ПЕРСИДСКОЙ ВОЙНЕ 1804-1813 ГГ. (ПО МАТЕРИАЛАМ АКТОВ КАВКАЗСКОЙ АРХЕОГРАФИЧЕСКОЙ КОМИССИИ).

Эдуард Оганесян

Ключевые слова: *Война, карабахские (арцахские) армяне, Акты кавказской археографической комиссии, архивные документы, помощь, добровольческие отряды, рапорты.*

Одним из важных результатов русско-персидской войны 1804-1813 годов была присоединение Карабахского ханства к Российской империи. Очевидный факт также оказание весомой помощи карабахских армян российским армиям в этой войне. Они участвовали во всех важных сражениях пришедшее в Карабахе и внесли свой важный вклад в победе русских войск. Несмотря на то, что вопрос помощи карабахских армян многократно обсуждалось в армянской и русской историографии, но содержащие в *Актах кавказской археографической комиссии* (АКАК) архивные документы сообщают важные подробности этой помощи, придают новые толкования в изучении этого историографического вопроса.

THE KARABAKH ARMENIANS IN THE RUSSIAN-PERSIAN WAR OF 1804-1813 (ON MATERIALS OF THE ACTS OF THE CAUCASIAN ARCHAEOGRAPHIC COMMISSION).

Eduard Hovhannisyan

Key words: *War, Karabakh (Artsakh) armenians, Acts of the Caucasian archaeographic Commission, archival documents, assistance, volunteer detachments, reports.*

One of the important results of the Russian-Persian war of 1804-1813 was the annexation of the Karabakh khanate to the Russian Empire. The obvious fact is also providing substantial assistance to the Karabakh Armenians to the Russian armies in this war. They participated in all important battles, which came in Karabakh and contributed to the victory of Russian troops. Despite the fact that the question of assistance to the Karabakh Armenians repeatedly discussed in the Armenian and Russian historiography in *Acts of the Caucasian archaeographic Commission* (ACAC) provides noteworthy archival documents that tell the important details that help give new interpretations in the study of this historiographical question.